# Ելեք, տըղերք  /  Yelek’, təgherk’

Ելեք, տըղերք, ելեք քոչերը բառնանք,
Երթանք Թավրիզ ու Երևան, ետ դառնանք.
Ելեք, տըղերք, ելեք քոչերը բարձեք,
Հասեք Մոսկով ու Երևան, ետ դարձեք.
Ելեք քոչերը բառնանք,
Երթանք Թավրիզ ու Երևան, ետ դառնանք:

Կամաց քըշեք սելերը, յարո ջան,
Կորան չարխիս թելերը, յարո ջան,
Կամաց քըշեք սելերը:
Արփաչայի քյանարը, յարիս ոսկե քյամարը:

Այ տըղա բաղի միջին, յարո ջան,
Ես եմ քո խաղի միջին, յարո ջան,
Ես եմ քո խաղի միջին:
Կայնել ես սարի հովին,
Երնեկ ծոցըդ քընողին:
Սարերումը տուն ունեմ,
Քեզ պես հազար շուն ունեմ:

Աղջի, լեզուդ բիբարով, յարո ջան,
Քեզի քաղեմ նուբարով, յարո ջան,
Քեզի քաղեմ նուբարով:
Հինգ էծ ունեմ ուլերով,
Կաթ կըկըթեմ տըկերով:
Հենց որ եկավ աշունը,
Յարիս տանեմ մեր տունը:

Սիրած յարը քաղցըր ա, յարո ջան,
Էլ որ չըտան, փախցըրա, յարո ջան,
Էլ որ չըտան, փախցըրա:

Yelek’, təgherk‘, yelek‘ k’och‘erə barrnank’,
Ert’ank’ T’avriz u Yerevan, yet darrnank’.
Yelek’, təgherk‘, yelek‘ k’och‘erə barts’ek’
Hasek’ Moskov u Yerevan, yet darts’ek’,
Yelek’ k’och’erə barrnank‘,
Ert’ank‘ T’avriz u Yerevan, yet darrnank’.

Kamats’ k’əshek‘ selerə, yaro jan,
Koran ch’arkhis t’elerə, yaro jan,
Kamats’ k’əshek‘ selerə.
Arp’ach’ayi k‘yanarə, yaris voske k‘yamarə.

Ay təgha baghi mich’in, yaro jan,
Yes em k’o khaghi mich’in, yaro jan,
Yes em k’o khaghi mich’in.
Kayne les sari hovin,
Ernek tsots’ət k’ənoghin.
Sarerumə tun unem,
K’ez pes hazar shun unem.

Aghch’I, lezut bibarov, yaro jan,
K’ezi k’aghem nubarov, yaro jan,
K’ezi k’aghem nubarov.
Hing ets unem ulerov,
Kat‘ kəkət’em təkerov.
Hents‘ vor ekav ashunə,
Yaris tanem mer tunə.

Sirats yarə k’aghts’ər a, yaro jan,
El vor ch’ətan, p’akhts’əra, yaro jan,
El vor ch’ətan, p’akhts’əra.